

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 Թ. ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
2. «Քիմիա» գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի հաշվետվությունը 2025-2026 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին(դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):
4. Ընթացիկ հարցեր՝ ասպիրանտների ատեստավորում:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ գիտխորհրդի աշխատանքային օրակարգը բոլորիդ ուղարկված էր. Առաջարկություններ կամ փոփոխություններ ունե՞ք՝ :

Հ.Գ.Խաչատրյան- առաջարկում եմ դնել օրակարգը քվեարկության և անցնել աշխատանքի:

Գիտական խորհրդի աշխատանքային օրակարգը ընդունվեց՝ ներկայացված հարցերով:

Ա.Ս.Գալստյան - Հարգելի գործընկերներ նախքան հիմնական օրակարգին անցնելը ուզում եմ նշել անհարգի բացակայությունների հարցը: Ռեկտորի կողմից խիստ նկատողություն է ստացել Քիմիայի ֆակուլտետի Քիմիա բաժնի 3-րդ կուրսի ուսանող Հ.Սարգսյանը: Հիշեք բացակայությունների հարցում խիստ ենք լինելու և անհարգի բացակայությունները կարող են բերել ուսանողի հեռացման:

Այժմ անցնենք մեր աշխատանքային օրակարգին

Ա.Ս. Գալստյան- Պրակտիկաների արդյունքների մասին տեղեկությունները ներկայացրել է գրասենյակը: Այս տարի պրակտիկայի վայրը ընտրել է ուսանողը և սա բավականին արդյունավետ տարբերակ է, քանի որ ուսանողը աշխատել է, ձեռք է բերել բավականին փորձ և հմտություններ: Արդյունքներից գոհ են և ուսանողները և պրակտիկան անցկացնող կողմը: Պրակտիկայի անցկացման նման

ռազմավարությունը պետք է շարունակել, քանի որ այն նաև ապահովում է աշխատաշուկա:

Նիստի նախագահ – Ա.Ս. Գալստյան

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը պետք է լսի ասպիրանտների ատեստավորման հարցը: Ֆակուլտետը ունի 2 ասպիրանտ: Երրորդ տարվա ասպիրանտ Վլադիմիր Վարդապետյանը և առաջին տարվա ասպիրանտ Շուշաննա Վարդանյանը. Այս պահին Շուշաննա Վարդապետյանը գործուղման է:

ԼՍԵՑԻՆ. – ԵՊՀ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի 3-րդ տարվա (ավարտական) ասպիրանտ Վլադիմիր Վահանի Վարդապետյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյանը նշեց, որ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում՝ իր թեկնածուական աշխատանքն է ավարտում 3-րդ տարվա ասպիրանտ՝ Վլադիմիր Վահանի Վարդապետյանը: Հաշվետու ժամանակահատվածում Վ.Վարդապետյանը: Նա հավաքել է ուսումնական դասընթացների համար նախատեսված բոլոր կրեդիտները, ունի 7 գիտահետազոտական աշխատանք, պատրաստվում է տպագրել անհատական հոդված և հանձնել մասնագիտական քննությունը:

Ասպիրանտ Վ.Վ.Վարդապետյանը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դրական կարծիքը և Վ.Վարդապետյանի հաշվետվությունը, կատարած աշխատանքների մասին, Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով որոշեց ատեստավորել ԵՊՀ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի 3-րդ տարվա ասպիրանտ Վլադիմիր Վահանի Վարդապետյանին:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյանը նշեց, որ Օրգանական քիմիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Շուշաննա Վարդանյանը համատեղ ծրագրով ասպիրանտ է: Մեր ֆակուլտետում նման դեպքն առաջին անգամ է: Շ. Վարդանյանը ԵՊՀ Պարտադիր դասընթացներից հանձնել է Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն- 4 կրեդիտ, Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ -4 կրեդիտ: Ընտրովի դասընթացներից՝ Մասնագիտական հաղորդակցման մեթոդաբանություն- 3 կրեդիտ: Զուգահեռ հանձնել է նաև Կաունսալի համալսարանի ասպիրանտի պարտադիր առարկանների քննությունները: Հաշվետու տարում հրատարակել է 1 հոդված և 1

հողված գտնվում է տպագրության փուլում: Մասնակցել է 2 միջազգային գիտաժողովների:

Հեռահար տարբերակով Շ. Վարդանյանը ներկայացրեց կատարած աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Օրգանական քիմիայի ամբիոնի դրական կարծիքը և Շ.Վարդանյանի հաշվետվությունը, կատարած աշխատանքների մասին, Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով որոշեց ատեստավորել ԵՊՀ Օրգանական քիմիայի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Շուշաննա Վանիկի Վարդանյանին:

Ա.Ս. Գալստյան – Օրակարգի հաջորդ հարցը՝ «Քիմիա» գիտահետազոտական կենտրոնի ղեկավար Տ.Վ.Ղուչիկյանի հաշվետվությունն է 2025-2026 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

«Քիմիա» գիտահետազոտական կենտրոնի ղեկավար Տ.Վ.Ղուչիկյանը ներկայացրեց կենտրոնի Ձեռք բերած հաջողությունները և հետագա աշխատանքները: Նա ներկայացրեց կենտրոնի աշխատակիցների ատեստավորման նախագիծը (նախագիծը տրված է լաբորատորիաների վարիչներին) և նշեց, որ նույնպես ամսվա ընթացքում տեղի է ունենալու ատեստավորման գործընթացը: Հաշվետու տարում կենտրոնում գործող լաբորատորիաների կողմից տպագրված գիտական հոդվածների քանակը:

Ֆիզիկական քիմիայի լաբորատորիա- 7 հոդված (2-Q1, 1-Q2, 3-Q3 1-Q4)

Օրգանական քիմիա լաբորատորիա -14 հոդված (1-Q1, 1-Q2, 3-Q3 9-Q4)

Էկոլոգիական քիմիա լաբորատորիա -8 հոդված (4-Q1, 1-Q2, 1-Q3 2-Q4)

Անօրգանական քիմիա լաբորատորիա 1 հոդված (1-Q1)

Հաշվի առնելով ատեստավորման համար անհրաժեշտ հոդվածների քանակը և ՄԳՇ-ի տվյալները պետք է նախապատվությունը տալ ավելի բարձր քարոքում տպագրելու խնդրին.

Ա.Ս.Գալստյան -ըստ օրակարգի պետք է լսենք ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին(դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան,-«Դասալսումներ մեր ամբիոնում կատարվում են բավականին հաճախ, և դասախոսությունների

Ժամանակ և լաբորատոր աշխատանքների ընթացքում հիմնական ուշադրությունս կենտրոնացված է եղե ծրագրային համապատասխանությանը: Ամեն ինչ նորմալ էր և համապատասխանում էր ծրագրին. Առավել ուշադիր եմ եղել լաբորատոր աշխատանքների ընթացքին, ուսանողները կատարում են անհատական փորձեր և անգամ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Ա.Մկրտչյանը նկատեց նման դրական փոփոխությունը»:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Գ.Ս. Գրիգորյան, –«Ընդհանուր առմամբ դասերը անցկացվում են բարձր մակարդակով: Ամբիոնի բոլոր դասերը իրականացվում են էլեկտրոնային ռեսուրսների կիրառմամբ: Համապատասխան գրքերը և նյութերը տեղադրված են «e-learning» հարթակում: Ուշադրություն եմ դարձրել նաև մատյանների լրացման գործընթացին: Իրականացվել են նաև ստուգումներ քննատոմսերի հարցերի և տեղադրված նյութերի համապատասխանությանն»:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի

նախագահ, դեկան

Ա.Ս.Գալստյան

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան